

ծիւեան Կաթողիկոսէն ձեռնադրեցաւ տիտղոսիւ
Աբբեպ. Եգեսիոյ եւ 1750ին Հռոմ՝ Օգնական
կարգուեցաւ:

Սակայն Սարգիս Աբբեպ. ցորչափ Հռոմ
էր այս փոխանորդութիւնը կատարեց: Այսպէս
7 Դեկտ. 1745 թուակիր թղթով (Դիւան Լի-
վոննոյի Հայոց Եկեղ.) Հռոմայ փոխանորդ Կար-
դինալ Եպիսկոպոսը հրաման կու տայ Սարգսի՝
ըստ խնդրանաց Ս. Ժողովոյ, որ Դպրատան ա-
շակերտ Յովսէփ Պարխուտար եւ Յովհ. Գրաի-
չեան (Craicion) հայ կաթուղիկէ պատանի-
ներուն չորս փոքր աստիճանները տայ: Դարձեալ
15 Դեկտ. 1745 թուականաւ՝ (Դիւ. Լիվ.) որ
Դպրատան աշակերտ Յովհաննէս Դասպասի եւ
Յովս. Պարխուտարի երեք սուրբ աստիճանները
տայ, որոնց առաջինը 1768 Ապրիլ 30ին Մէր-
տինի Աբբեպիսկոպոս անուանուեցաւ Ս. Գահէն.
21 Յունիս 1768 ձեռնադրուեցաւ ի Զմմառ
Միքայէլ Պետրոս Գ. Կաթողիկոսէն, 22 Օգոստ.
1769 հրաժարեցաւ աթոռէն եւ տարիէ մը
Հռոմ երթալով 3 Ապրիլ 1773ին վախճանեցաւ
եւ թաղուեցաւ Ս. Մարիամ Եգիպտացի եկեղե-
ցին: Ունի ձեռագիր ընտիր երկասիրութիւն մը
«Մեկնութիւն հանդիսաւոր Պատարագի»,
գրուած 1767ին ի Հռոմ (Մատ. Անտ.): Նոյն-
պէս 11 Օգ. 1746 թուականաւ (անդ), որ Ս.
Մարիամ Եգիպտացի Եկեղեցւոյն մէջ քահանայ
ձեռնադրէ Ստեփան Յովհաննէսեանը: Ինքն ալ
1773ին գրած վերոյիշեալ նամակին մէջ կ'ըսէ.
«Կարտինալ Կարաֆա... ետ ձեռնադրել մեզ